«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը պատմության ուսուցման ընթացքում*

Կատարող՝ *Արտակ Հակոբյան*

Երևանի Ռաֆֆու անվան թիվ 36 հիմնական դպրոց

Ղեկավար՝ *Նունե Ասրյան*

Բովանդակություն

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....4

1.1 Արժեքների տեսակները.....6

1.2 Արժեքային համակարգի կարևորությունը.....9

ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....10

2.1 Ինչպես զարգացնել արժեքային համակարգը պատմության ուսուցման ընթացքում.....12

Եզրակացություններ.....14

Գրականության ցանկ.....15

Երևան - 2023

Ներածություն

Մեր հետազոտական աշխատանքը ունի հետևյալ վերնագիրը՝ «Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը պատմության ուսուցման ընթացքում»: Թեման ընտրելիս հաշվի են առնվել մի շարք նախադրյալներ, որոնցից են թեմայի արդիականությունը, նպատակի կարևորությունը և առաջ քաշած խնդիրները:

Արժեհամակարգի գրագետ ձևավարումը ժամանակակից աշխարհի և հատկապես մեզ՝ հայերիս համար, կարևորագույն խնդիրներից մեկն է դարձել, մեր ինքնությունը պահպանող և առաջ տանող ուժը ապագա սերունդն է, որի ուսերի վրա է դրված հայի՝ սերնդեսերունդ փոխանցվող արժեհամակարգի պահպանման հարցը: Իսկ սերունդներին կրթելու և դաստիարակելու դժվարին և պատասխանատու գործը, ինչպես շատ ժամանակներ առաջ, այնպես էլ հիմա դրված է ուսուցչի և դպրոցի ուսերին:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ևս մեկ անգամ բարձրաձայնել սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման կարևորագույն հարցը, մասնավորապես պատմության ուսուցման ընթացքում:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել համապատասխան գրականությունը
- Տալ արժեք-արժեքային համակարգ հասկացությունների սահմանումները
- Ներկայացնել արժեքային համակարգի ձևավորումը պատմության ուսուցման ընթացքում
- Ցույց տալ արժեքային համակարգի կարևորությունը:

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարդկային բոլոր ձգտումներն ու վարքի դրսևորման տեսակները, հույզերն ու ապրումները, մտահաղացումներն ու նպատակները ձևավորվում են այն տեսանելի գաղափարի շուրջ, որը կոչվում է աժեքային համակարգ, ինչն էլ անմիջականորեն դառնում են նաև մեր մշակույթի անբաժան մասը:

Բոլորս էլ ենթագիտակցորեն ձգտում ենք կյանքի ամենավեհ զգացողության ապրմանը՝ երջանկությանը, ինչը իրենից ենթադրում է սեփական արժեքային համակարգի իրացմանը և արտաքին աշխարհի միջև համապատասխանությանը: Հենց սա է պատճառը, որ նախքան ցանկացած ոլորտի, ժողովրդի, մշակույթի ուսումնասիրությունը սկսելը, պետք է նախ և առաջ ուսումնասիրել նրա արժեքային համակարգը, ինչը թույլ կտա խորությամբ հասկանալ ու ընկալել, այն ինչը առաջին հայացքից անհասկանալի կարող է թվալ: Յուրաքանչյուր ազգի, պետության, ժողովրդի հատուկ են արժեքային առանձին համակարգեր, ինչը որոշ առումներով հեշտացնում է միևնույն շրջանի ժողովրդի շփումը միմյանց հետ, ի տարբերություն այլ շրջանների ժողովրդի:

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:[1]

Արժեքային համակարգերը տարբեր են ոչ միայն տարբեր ժողովուրդների մոտ, այլև յուրաքանչյուր ոք ունի իրեն հատուկ արժեքային համակարգը, որը ձևավորվում է կյանքի տարբեր ոլորտներում՝ ընտանիք, դպրոց, սոցիալական տարբեր միջավայրեր:

Արժեքային համակարգը կարելի է բաժանել մի քանի կարևոր կատեգորիաների, որոնց մեջ առաջնահերթ են սերը, հավատը, ճշմարտությունը և այլն: Այս կատեգրիաների մասին խոսվել են դեռևս շատ հին ժամանակներից, դրանց կարևորության գաղափարը ժառանգել են սերունդները և հասցրել մինչև մեր օրեր, կարելի է ասել, որ առանց այս հիմնական կատեգրիաների արժեքային համակարգը մեծ կորուստներ կկրեր, սրանք բնորոշ են տարբեր մշակույթներ ունեցող ժողովուրդներին: Այժմ մի քանի բառով ներկայացնենք այս կատեգրոիաները՝ Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը

[1] https://hy.m.wikipedia.org/wiki/Արժեքներ

դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:

Ինչպես նշեցինք՝ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից,ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի(որի կրողը նա համարում է ճշմարիտը), գործնականի (բարին), գեղարվեստականի (գեղեցիկը):

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր 《թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է》 սկզբունքով:[2]

Անդրադառնալով դպրոցի տված դաստիարակությանն ու փոխանցավող արժեքներին, նշենք՝ նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին:
- Կարևորի ազգային-պետական մտածողությունը և գործելակերպը, դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
- Ունենա ազգային ինքնագիտակցություն:
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության կարևորությունը:
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում:

[2] https://hy.m.wikipedia.org/wiki/Արժեքներ

- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության տեղը:
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...[3]

Մեզանից յուրաքանչյուրի համար կյանքի արժեքները հիմնական ուղենիշն են տարբեր գործունեության մեջ: Նրանք նպաստում են անձնական աճին, հարմարավետ կյանքի ստեղծմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը և այլն: Մարդուն ամեն ինչ հասնում է նրա կառուցած արժեքների հիերարխիայի շնորհիվ, որը որոշում է, թե առաջնահերթություններից որն է առաջինը: Սա մարդկային երջանկության չափանիշն է:

1.1 Արժեքների տեսակները

Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:[4]

Արժեքների փոխանակումը կարևոր է, քանի որ դա ենթադրում է, որ համայնքի անդամները պետք է հասկանան, ընդունեն և կիսեն դրանք, որոնք էլ իրենց հերթին երաշխավորելու են ներդաշնակ համակեցություն և փոխադարձ հարգանք:

Արժեքները, ինչպես արդեն նշել էինք վերը, բազմաթիվ են սկսած ամենաընդհանուրից ընդունված մարդկանց մեծամասնության կողմից, մինչև առավել անձնական և մտերիմ, յուրաքանչյուրին բնորոշ: Արժեքներն ազդում են այն որոշումների և վարքագծի վրա, որոնք մարդիկ կայացնում են իրենց կյանքի ընթացքում: Ուստի դրանք գործողության սկզբունքներ են:[5] Այժմ թվարկենք դրանցից մի քանիսը՝

- **Համընդհանուր արժեքներ,** որոնք դրական են համարում մշակույթների, երկրների, մարդկանց ճնշող մեծամասնությունը, օրինակ՝ անկեղծություն, պատասխանատվություն, արդարություն, ազատություն, բարություն,

[3] Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10_11 դասարան, էջ 39:
[4] Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր: ԵՊՀ, Երևան 2016թ., էջ 228:
[5] https://hy.warbletoncouncil.org/tipos-de-valores-5814

ազնվություն, սեր, բարեկամություն, հարգանք, վստահություն, համերաշխություն:

- **Մարդկային արժեքներ՝** համերաշխություն, հանդուրժողականություն, բարեկամություն, խոնարհություն, հավատարմություն, զգայունություն:
- **Անձնական արժեքներ,** սրանք այն արժեքներն են, որոնք առաջնորդում են մարդուն կյանքի ընթացքում, օգնում որոշումներ կայացնել և փոխազդել այլ մարդկանց վրա: Դրանք սոցիոմշակութային, ընտանեկան և անհատական արժեքների խառնուրդ են, որոնք ստեղծվել են եզակի փորձերի արդյունքում: Այս արժեքները հետևյալն են՝ հավատարմություն, երախտագիտություն, կարգապահություն, համբերություն, հաստատակամություն, կարեկցանք, հասկացողություն, համառություն:
- **Ընտանեկան արժեքներ՝** ընտանեկան հանգույց, հարգանք տարեցների հանդեպ, բարեկամականություն**,** ազնվություն**,** համերաշխություն**,** անկեղծություն:
- **Սոցիոմշակութային արժեքներ՝** հայրենասիրություն (կան երկրներ ավելի հայրենասեր, քան մյուսները), կրոն / արժեք կրոնական սովորույթներ, ճշտապահություն (կան երկրներ, որտեղ մարդիկ ավելի ճշտապահ են), առատաձեռնություն, համերաշխություն, ընտանիք (օրինակ, լատինական երկրներում ընտանիքը սովորաբար ավելի բարձր է գնահատվում):
- **Բարոյական արժեքները՝** կոչվում են այնպիսիները, որոնք էական են հասարակության մեջ ապրելու և էթիկական որոշումներ կայացնելու համար, դրանք են՝ հարգանք մյուսների նկատմամբ, հանդուրժողականություն**,** հավատարմություն**,** ազնվություն: Պետք է հաշվի առնել, որ ժամանակի ընթացքում աշխարհը փոխվում է, լավ կամ բարոյական արժեքները ևս հակված են փոփոխություններ կրելու:
- **Հոգևոր արժեքներ՝** կրոնական հավատալիքներ, ներդաշնակություն, հավատ: Այս տեսակի արժեքները հիմնականում արտացոլված են պատմության ընթացքում սերնդեսերունդ փոխանցված սուրբ համարվող տեքստերում: Երբեմն դրանք համընկնումեն համընդհանուր արժեքների հետ և ձգտում են նվազեցնել մարդկային գործողությունները, որոնք բխում են վրդովմունքից, եսասիրությունից կամ նախանձից՝ ուրիշների հանդեպ հարգանք դավանելով: Այս արժեքները գործնականում կիրառվում են նույնիսկ նրանց կողմից, ովքեր չեն նույնանում կրոնի հետ՝ ապրելով իրենց հոգևոր համոզմունքներով:

- **Գեղագիտական արժեքներն** այն արժեքներն են, որոնք վերաբերում են իրերի գեղեցկությանը կամ տգեղությանը:
- **Էթիկական արժեքներ՝** սրանք սոցիալապես ընդունելի վարքային դրսևորումներն են մասնագիտության, կազմակերպության, գիտելիքի, ուժի կամ այլ հասարակական շրջանակներում: Հիմնական նպատակն է հասնել նորմերի հաստատմանը, որոնք կսրգավորում են այն ձևը, որով անձը գործում է իր աշխատանքային ոլորտում՝ միշտ փնտրելով լավը և ընդհանուր օգուտները սխալ անձնական հավակնություններից վեր:
- **Նյութական արժեքները** կոչվում են այն կոնկրետ տարրերը, որոնք գոյակցում են մարդկանց հետ և օգնում նրանց գոյատևել և ապրել ավելի հարմարավետ: Դրանք են ընթերցանությունը, իմաստասիրությունն ու հետաքրքրասիրությունը:
- **Գործիքային արժեքները** կոչվում են այնպիսիները, որոնք թույլ են տալիս մեզ հասնել գործնական նպատակների, որոնք օգտակար են անձնական բարեկեցության համար: Դրանք են բարեկամականություն**,** մանրակրկիտություն**,** համառություն:
- **Քաղաքական արժեքներ՝** ազատություն, հավասարություն, ժողովրդավարություն: Այս արժեքների միջոցով յուրաքանչյուր անհատ ընկալում է, թե ինչպես է աշխատում հասարակությունը:
- **Մասնագիտական կամ աշխատանքային արժեքներ՝** հավատարմություն**,** պատասխանատվություն**,** ստեղծագործականություն:
- **Ընկերության արժեքները՝** համագործակցություն**,** թմային աշխատանք**,** աղորդակցություն**,** նորարարություն

Արժեքների մեծ նշանակության պատճառն այն է, որ դրանց հիման վրա մարդիկ ձևավորում են իրենց գործելաոճը, ապրելակերպը, քանի որ դրանք յուրաքանչյուր մարդու համոզմունքների էական մասն են:

Մշակույթի հետ առնչվող արժեքներն ունեն որոշակի պատմական բնույթ, որով ձևավորվել են հասարակական ընդունելի տարբեր կանոններ, որոնցից են նաև լավի և վատի տարբերակումը:

1.2 Արժեքային համակարգի կարևորությունը

Արժեքները կարևոր են, քանի որ դրանք օգնում են մարդկանց որոշել, թե կյանքում ինչն է կարևոր: Մյուս կողմից, դրանք էական են հասարակության մեջ ապրելու համար: Համընդհանուր արժեքները, որոնք համարվում են դրական, ինչպիսիք են համերաշխությունը կամ հանդուրժողականությունը, թույլ են տալիս մարդկանց հարգել և գոյակցել՝ չնայած իրենց տարբերություններին: Մարդկային արժեքները ևս իրենց հերթին հեշտացնում են հասարակական հարաբերությունները, դրանց մեջ մտցնելով՝ բարեկամություն և խոնարհություն: Իսկ անձնական արժեքները օգնում են կյանքում առաջնորդվել, այնպիսի դրական սկզբունքներով, ինչպիսիք են օրինակ՝ կարգապահությունը, համբերությունը, երախտագիտության զգացումը և այլն: Կարելի է ասել՝ այս և վերը թվարկված մյուս արժեքների իրացումն ու ընդունվածությունը հասարակության կողմից, իրական հիմք են հանդիսանում հասարակության մեջ լիարժեք ապրելու և գործելու համար:

Երեխան նախքան դպրոց հաճախելը, արդեն իսկ ծանոթ է արժեքային համակարգին, նա համակարգի ինչ_որ տարրեր տեսնում ու վերցնում է ընտանիքի անդամներից, նրանց տված դաստիարակությունից, նախքան դպրոցը հաճախած կրթօջախից: Դպրոցում էլ ամրապնդվում են «հին» արժեքները և ավելացվում նորերը, որը ուսուցիչը ամեն դասընթացի շրջանակներում փորձում է տարբեր մեթոդների միջոցով փոխանցել իր աշակերտներին:

Այսպիսով՝ կյանքի ամեն շրջափուլ նոր արժեքների բացահայտման, ճանաչման և ընդունման մի փոքրիկ շրջան է, որը մարդուն օգնում է ընդունել աշխարհն ու հասարակությանը այնպիսին, ինչպիսին կան դրանք:

Եթե հասարակության մեծամասնությունը կարողանա տարածել վերը նշված արժեքային համակարգի սկզբունքների կարևորությունը, ապա վստահաբար կարելի է ասել, որ մարդը կապրի ավելի քաղաքակիրթ, բարոյապես բարձր մակարդակ ունեցող, հոգևոր և ազգային բարձր դիմագիծ ունեցող երկրում:

ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում, ինչպես արդեն նշել էինք մեծ և անխախտ դեր ունի դպրոցը, որի գերնպատակն է հայ ազգին տալ բարոյական, ազգային արժանիքներով օժտված, հայրենասեր սերունդ:

Բազմաթիվ արժեքների մեջ պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն: Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ, այս մասին պատմության դասընթացներին խոսվում է ավելի մանրամասն ու հանգամանալից, ինչը նպատակ է հետապնդում ազգային արժանապատվություն դաստիարակել մատաղ սերունդների մեջ:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին, հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:[6]

Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են

[6] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, 8_9 դասարան, ուսուցչի ձեռնարկ, էջ 6:

արժեքները վրա է հասնում ոգու սովը: Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:[7]

Պամության դասընթացների գլխավոր և հիմնական նպատակը հայրենասիրական բարձր արժեքներով օժտելն է աշակերտներին, իսկ հայրենիքը սիրելու և նրա արժանի զավակը դառնալու համար պետք է նախ և առաջ իմանալ նախնիների պատմությունները, որոնք լի են հերոսական էջերով, ապա ճանաչել հայրենիքի ամեն անկյունը, լինել այն վարերում, որոնք պատմում են մեր հերոսական էջերի մասին:

[7] https://mediamax.am/am/column/12925/

2.1 Ինչպես զարգացնել արժեքային համակարգը պատմության ուսուցման ընթացքում

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:[8]

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները ինչպես նշեցինք լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնա- կան գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել հայրենասիրական, քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտ- ների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և, ընդհանրապես, պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիարակչական գործընթացի օրինաչափություններին: Միևնույն

[8] Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112

ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատմության պատմական գիտության բոլոր նվաճումները: Պատմության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու, նրա սոցիալական հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ պատմության դպրոցական դասընթացի բարդացում և սովորողների ծանրաբեռնում արտածրագրային նյութերով:[9]

Հայոց պատմության դասընթացներին ուսուցիչը սովորողների մոտ տարբեր մեթոդների, հմտությունների, ճանաչողական էքսկուրսիաների միջոցով փորձում է սերմանել հայրենասիրական բարձր և անխախտ արժեքներ: Մեր ազգը դարեր շարունակ եղել և մնում է ներքին և արտաքին թշնամիների հարձակման կիզակետում, այդ իսկ պատճառով հատկապես «Հայոց պատմություն» դասավանդող յուրաքանչյուր մանկավարժի առաջնային պարտքն է համարվում դաստիարակել սերունդ, որի կարևորագույն նպատակը կլինի ծառայել իր երկրին, լինել այն հիմնաքարը, որի օգնությամբ այս փոքրիկ երկիրը մեծ նվաճումներ կունենա, այս փոքրիկ երկրի դրոշը մեծ բեմերում և հարթակներում ամենաբարձրը կծածանվի՝ հիշեցնելով մեծ պետություններին այս փոքրի երկրի տոկունության, համառության և ապրելու ու արարելու մեծ ձգտման մասին: Կարևոր չէ, թե ինչ բնագավառում կդրսևորի իրեն հետագայում աշակերտը, կարևորը այն է, որ նա լինի իր գործի վարպետը՝ լինի դա զինվորական գործ, շախմատ, բժշկություն թե շինարարություն: Կարևոր է, որ հայ մարդը իմանա իր երկրի պատմությունը, դաս քաղի անցյալից և կայուն հիմքի վրա ստեղծի իր և իր երկրի ապագան:

[9] Արմինե Սարգսյան, Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում : էջ 40

Եզրակացություններ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

- Արժեքային համակարգը կարելի է բաժանել մի քանի կարևոր կատեգորիաների, որոնց մեջ առաջնահերթ են սերը, հավատը, ճշմարտությունը:
- Մարդուն ամեն ինչ հասնում է նրա կառուցած արժեքների հիերարխիայի շնորհիվ, որը որոշում է, թե առաջնահերթություններից որն է առաջինը: Սա մարդկային երջանկության չափանիշն է:
- Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:
- Կյանքի ամեն շրջափուլ նոր արժեքների բացահայտման, ճանաչման և ընդունման մի փոքրիկ շրջան է, որը մարդուն օգնում է ընդունել աշխարհն ու հասարակությանը այնպիսին, ինչպիսին կան դրանք:
- Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և, ընդհանրապես, պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիարակչական գործընթացի օրինաչափություններին:

Գրականության ցանկ

1. Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր: ԵՊՀ, Երևան 2016թ.:
2. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10_11 դասարան:
3. Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:
4. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, 8_9 դասարան, ուսուցչի ձեռնարկ, էջ 6:
5. https://hy.m.wikipedia.org/wiki/Արժեքներ
6. https://hy.warbletoncouncil.org/tipos-de-valores-5814
7. https://mediamax.am/am/column/12925/